ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՄԵ-ՇՈՒՊՐԻԱ ԵՐԿՐՈՒՄ

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ

Բառնասիրական և պատմա-հնագիտական ժամանակակից հետախուզումները ցույց են տալիս այն սերտ կապը, որ ունեցել են կազմավորվող հայոց լեզվի հիմքում ընկած լեզուն կրող ցեղերը խեթական աշխարհի հետ։

Ներկայումս պարզվում է, որ հայերի հնդեվրոպական նախնիները՝ հոմերոսյան էպոսի արիմները, ն. մ.թ. երկրորդ հազարամյակի կեսերին «ծովային ժողովուրդների» հետ միասին հայտնվեցին Հալիս գետի հովտում։ Այստեղ նրանք տարածվեցին պատմական Փոքր Հայքում, «հիերոգլիֆիկ խեթական» արձանագրությունների[1] տարածման արևելի սահմաններում։ Ժամանակագրական տեսակետից, նշված տերիտորիայում հնդեվրոպական արիմների տարածումը տեղի է ունեցել ն. մ. թ. XIV—XIII դարերում՝ այն ժամանակ, երբ խեթական պետությունը, որի կազմի մեջ էր մտնում արիմների բնակության տերիտորիան՝ Խայասա երկիրը, ապրում էր իր ծաղկման շրջանը։

Այսպես կոչված գորիական դաղթի շրջանում, այսինքն մոտավորապես XII դարի սկզբին ն.մ.թ., տեղի ունեցավ փռյուգիացիների դաղթը Փոքր Ասիա. նրանց հարվածների տակ ընկավ խեթական տերությունը։ Շուտով փռյուգիացիները մյուս ցեղերի հետ միասին ներխուժեցին Ասորեստանի պետության սահմանները։

Խեթական պետության կործանումից հետո, մոտավորապես 1200—1180 թվականներից, դադարեցին խոսել Բողազ-Քյոյի խեթական արխիվները, դրա հետ միասին դադարեց հիշատակվել և Խայասա երկիրը։ Նրա փոխարեն հիշատակվում է Խաթե երկիրը, որ նշանակում է «խեթերի երկիր»[2]։

Հայերի՝ այդ տերիտորիայում ապրող հնդեվրոպական նախնիները խառնվել են նեսիտական խեթերի, «հիերոգլիֆիկ խեթերի», խուրրիական ցեղերի, մասամբ նաև նախախեթական, արխաղա-ադիգեական և քարթվելական ցեղերի հետ։ Արիմներ-արմենների այս նոր էթնիկական գոյացումը խոսում էր հայերեն, որն այդ շրջանում գգալիորեն մոտ էր մնացյալ հնդեվրոպական լեզուներին, մասնավորապես փռյուգիերենին և էգեյա-փոքրասիական լեզուներին։

Վերջին հետազոտությունների համաձայն, Խայասա-Խաթե երկրի տերիտորիայում ապրող հայկական ցեղերը Ուրարտու երկրում պետք է որ անվանվեին «խեթեր», մինչդեռ ասորեստանցիները նրանց անվանում էին «ուրումեատցիներ», իսկ ավելի հաճախ (հայերին ցեղակից մյուս թրակա-փռյուգիական

---

[1] *Տե՛ս Ի. Մ. Դյակոնով, Խեթերը, փռյուգիացիները և հայերը, Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր (հաս. գիտ.), 1956, № 11։*

[2] *Գոյություն է ունեցել նաև ուրիշ «Խաթե երկիր», որը տեղադրվում է Հյուսիսային Սիրիայում։*

ցեղերի հետ միասին)՝ «մուշկեր»[1]։ Ն.մ.թ. XII դարի ասորեստանյան արձանագրությունները մեծ տագնապով են խոսում ն. մ. թ. 1170—1165 թթ. «մուշկերի» ներխուժման մասին՝ Ասորեստանի պետության հյուսիս-արևմտյան շրջանները։ Սրանք հենց այն «մուշկերն» են, այլ արձանագրությունների «ուրումեացիները», որոնք ներխուժեցին Հայկական Լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի սահմանները և աստիճանաբար դարձան նստակյաց հողագործներ ու Ասորեստանյան պետության հարկատուները։ Այստեղ կազմավորված թագավորությունը, որի կենտրոնը Խարբերդի դաշտում էր, ասորեստանցիները կոչում էին «Մուշկերի թագավորություն»[2]։

Ասսուրա-բաբելական աղբյուրներից երևում է, որ Հայկական Լեռնաշխարհի սահմանները ներխուժած ցեղերը զբաղեցրել էին Խարբերդի դաշտում և Արևմտյան Տիգրիսի ակունքների մոտ (հին հայկական Անգեղ-տուն դավառը) գտնվող Ալզի և Պուրուլումզի շրջանները[3]։ Աղբյուրները մեզ հնարավորություն են տալիս պարզելու, որ փռյուգիացիների-մուշկերի հետ միասին այս տերիտորիայի սահմաններն են ներխուժել Խայասա երկրում և նրանից հյուսիս ապրող կասկեացիները (աբեշլացիներ) և ուրումեացիները։ Ըստ երևույթին «մուշկեր-ուրումեացիներն» այդ ցեղերի հետ կազմել են ցեղային միություն, որը գլխավորել են հինգ «թագավորներ»։ Ինչպես կտեսնենք ստորև, ցեղային այս միությունը՝ «Մուշկերի թագավորությունը», որը կազմավորվել էր Իշուվա և Ալզի-Պուրուլումզի շրջաններում, Ասորեստանի դեմ հանել էր 20 000 զորք։ Ասորեստանյան նվաճողների դեմ ընդհանուր պայքարում Մուշկերի թագավորության հետ միավորվել էին նաև Արևմտյան Տիգրիսի ավազանի տեղական խուրրիական ցեղերը՝ Շուպրիա, Կագմուխի (Կատմուխի), «Բաբխի» «Խաբխի» և այլ երկրները։

Ասորեստանյան պետության «բարբարոսական ծայրամասում», այսպիսով, կազմավորվեց բավական ուժեղ ցեղային միություն, որի հետ ասորեստանյան թագավորները պետք է լուրջ հաշվի նստեին։

Իր տարեգրություններում Թիգլաթպալասար I-ը (1115—1077) հայտնում է, որ իր գահակալումից կես դար առաջ, այսինքն մոտավորապես 1170—1165 թթ. ն.մ.թ., մուշկերը գրավել էին Ալզի և Պուրուլումզի երկրները։ Մուշկերը, «որոնք,— ինչպես վկայում է արձանագրությունը,— ահա արդեն 50 տարի է, ինչ գրավել են նախկինում Աշշուր աստծու տուրքը և հարկը վճարող Ալզի և Պուրուլումզի երկրները», ռազմատենչ ցեղեր էին, «որոնց կուրծքը ոչ մի թագավոր չէր կարող ընկճել և որոնք ապավինում էին իրենց ուժին»[4]։

Փոքր Ասիայից ներխուժած ցեղերը Թիգլաթպալասարի նույն տարեգրություններում անվանվում են կասկեացիներ և ուրումեացիներ։ Այս ցեղերը «Խաթթի երկրի անհնազանդ մարդկանց» համբավ ունեին, որոնք «իրենց ուժով գրավել են Շուբարտու երկրի, Աշշուրին հպատակ բնակավայրերը»[5]։ Ներխուժած կասկեացիները և ուրումեացիները գրավել էին նույն Ալզի և

---

[1] Այս էթնիկական տերմինից է ծագում հայերի «սոմեխ» գրագրական անվանումը։

[2] Այս Մուշկերի թագավորությունը չպետք է շփոթել ն. մ. թ. VIII դ. հայանի մուշկերի թագավորության՝ Փռյուգիական թագավորության հետ։

[3] Մուշկերի թագավորության կենտրոնը՝ Մուշկու երկիրը, հավանաբար գտնվել է Խարբերդի դաշտում, և հետագայում ուրարտացիների մոտ կոչվել է Մուշանի (Ներկայիս Մուշար-գպի շրջանը)։

[4] И. М. Дьяконов, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսու հետև՝ АВИИУ), № 10, I, 62 („Вестник древней истории" [այսու հետև՝ ВДИ], 1951, № 2, էջ 270)։

[5] АВИИУ, № 10, II, 89 (ВДИ, 1951, № 2, էջ 270)։

Պուրուլումդի շրջանները, որոնք վերը բերված կոնտեքստում ներկայանում էին որպես մուշկերի կողմից գրավված հողեր։ Իր մի այլ արձանագրության մեջ Թիգլաթպալասար I-ը հաղորդում է. «Ուրումեացիներին և արեշլացիներին, խաթթի երկրի անհնազանդ մարդկանց, ես նվաճեցի, միացրեցի իմ երկրի մարդկանց»[1]։ Վերջապես նույն թագավորի տարեգրություններից մի հատվածում կարդում ենք «4000 ուրումեացիների և արեշլացիների, խեթերի երկրի մարդկանց—[ես նրանց վերցրեցի և] միացրեցի իմ [երկրի մարդկանց]»[2]։ Ինչպես տեսնում ենք, այս կոնտեքստներում կասկեացիների փոխարեն հիշատակված են արեշլացիները. վերը ասվածից երևում է, որ դրանք այն նույն կասկեացիներն են, որոնք ապրում էին Խայասայից հյուսիս, ուր այդ ժամանակ տեղադրվում են հայերի հնդեվրոպական՝նախնիները՝ արիմները, resp. ուրումեացիները։

Ասորեստանյան աղբյուրներից բերված տվյալներից երևում է, որ ն.մ.թ. 1170—1165 թթ., ուրումեացիները կասկեացիների (var. արեշլացիների) հետ միասին գրավում են Ալզի և Պուրուլումդի[3] շրջանները, որոնք մտնում էին Ասորեստանի իշխանության տակ գտնվող Շուբարտու երկրի կազմի մեջ։ Դեռևս հին բաբելական դարաշրջանում, Շուբարտու անվան տակ հասկացվում էր ողջ Հյուսիսային Միջագետքը ընդհուպ մինչև Հայկական Տավրոսի ճյուղավորությունները։

Ավելի ուշ շրջանում այդ անվամբ, Շուպրիա (Շուբրիա) ձևափոխությամբ, կոչվել է Հայկական Տավրոսի հարավային ճյուղավորություններում գտնվող բարձր լեռնային շրջանը, ներկայիս Սասունը, ուր շատ երկար պահպանվել է սկզբնական խուրրիական բնակչությունը։

Ասորեստանյան տարեգրություններից երևում է, որ «մուշկերը», Թիգլաթպալասար I-ի գահակալության սկզբում Շուբարտու երկրի իրենց գրված Ալզի և Պուրուլումդի շրջաններից իջել են Տիգրիսի հովիտը և հարձակվել ասորեստանյան Կագմուխի նահանգի վրա (ներկայիս Միդիադի շրջանը)։ «Իմ գահակալության սկզբում,— կարդում ենք այդ թագավորի տարեգրություններում,— 20000 մարդ մուշկեր և նրանց 5 թագավորները, որոնք ահա արդեն 50 տարի է, ինչ գրավել են Ալզի և Պուրուլումդի երկրները... իջան լեռներից և գրավեցին Կատմուխի երկիրը»[4]։ Թիգլաթպալասար I-ը նրանց պարտության է մատնում և «6000 մարդու, նրանց զորքի մնացորդը..., դարձրի իմ հպատակները»[5]։ Այս ցեղերի հպատակեցման մասին խոսվում է նույն թագավորի նաև մյուս արձանագրություններում։ Ասվածից երևում է, որ Թիգլաթպալասար I-ի գահակալության առաջին տարիներին ուրումեացիները ենթարկված էին Ասորեստանին, այնուհետև տեղի է ունենում նրանց աստիճանական տարարնակեցումը Արևմտյան Տիգրիսի հովտում։

Խարբերդի դաշտի և Արևմտյան Տիգրիսի հովտի բարենպաստ բնապատմական պայմաններում «մուշկեր»-ուրումեացիները քոչվոր անասնապահնե-

---

[1] АВИИУ, № 11 (ВДИ, 1951, № 2, էջ 278)։

[2] АВИИУ, № 13 (ВДИ, 1951, № 2, էջ 279)։

[3] Այս շրջանները գտնվում էին Արզանա-սու գետի հովտում, այսինքն Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում, որտեղ Գ. Ա. Ղափանցյանը տեղադրում է Արմե երկիրը։ Տե՛ս նրա „Хайаса— колыбель армян", էջ 191, 198 և հտ։

[4] АВИИУ, № 10, I, 62 (ВДИ, 1951, № 2, էջ 270)։

[5] Նույն տեղում։

ից աստիճանաբար վերածվում են կիսանստակյաց և նստակյաց բնակչության։ Աշշուրնասիրպալ II-ի (884—859) տարեգրություններում այս մասերում ապրող «մուշկերը» ներկայանում են որպես խաղողագործությամբ, գինեգործությամբ, անասնապահությամբ և մետաղամշակությամբ զբաղվող նստակյաց հողագործներ։ Իր տարեգրություններում ասորեստանյան այս թագավորը հաղորդում է. «Անցա Տիգրիսը և մոտեցա Կատմուխի երկրին, ընդունեցի Կատմուխի երկրի և Մուշկի երկրի տուրքը՝ բրոնզե սափորներ, խոշոր ու մանր եղջերավոր անասուններ և գինի»[1]։

Նոր վայրում հաստատված «մուշկեր»-ուրումեացիները ժամանակի ընթացքում իրենց ձուլեցին բնիկ խուրրիական բնակչությունը, որը դեռ երկար ժամանակ պահպանվել էր ներկայիս Սասունի կիրճերում, իսկ վերջինս փաստորեն հետագայում էլ պահպանեց Շուպրիա անունը։ Թեև ուրումեացիների գրված տերիտորիան շարունակում էր նախկինի նման կոչվել Շուպրիա, բայց պետք է ենթադրել, որ (վերջինիս հետ մեկտեղ) հանդես էր եկել նաև նոր անուն՝ «Ուրումու»։

Այն վավերացված է «Ներիին Ուրումու»[2] անվան մեջ, որով ասորեստանցիները պետք է որ կոչեին նույն Շուպրիան նեղ իմաստով, այն է՝ ներկայիս Սասունի տերիտորիան։ Ամենայն հավանականությամբ, այս նույն շրջանն է, որ ասորեստանյան թագավոր Աշշուրնասիրպալ II-ի արձանագրության մեջ անվանվում է «Ներիին Նիրբու», որ բառացի նշանակում է «լեռնանցքների ներքին երկիր»[3]։

Ուրումեացիների ցեղի մասին ասորեստանյան տեղեկությունները վերաբերում են այն շրջանին, երբ Ուրարտու պետություն դեռ գոյություն չուներ։ Մենուայի (810—785) ժամանակից սկիզբ են առնում Ուրարտուի նվաճողական արշավանքները դեպի Մշո դաշտը և նրանից արևմուտք, Հայկական Տավրոսից այն կողմ գտնվող ու Ասորեստանին ենթակա Շուպրիան, որն ուրարտացիք այդ երկրի նոր բնակիչների՝ ուրումեացիների անունով սկսում են կոչել Ուրմեուխի կամ Ուրմե։ Ասվածից պարզ է դառնում, թե ինչու ուրարտական արձանագրություններում բացակայում է Շուպրիա երկիրը։ Ուսումնասիրողները նկատել են, որ այն ուրարտացիներին հայտնի է Ուրմեուխի (*Ուրմեուն), resp. Ուրմե կամ Ուրմե (*Ուրմե[նի]) անվան տակ[4]։

Ասորեստանցիները, հետագայում նաև ուրարտացիները, սովորաբար նվաճում էին Շուպրիայի հարթավայրային մասը, իսկ «Ներիին Նիրբուն» կամ «Ներիին Ուրումուն» (ներկայիս Սասունի լեռներում) իր անմատչելիության հետևանքով համարյա միշտ մնացել է անկախ։ Ասորեստանցիները մոտենում էին նրան և՛ արևմուտքից, և՛ արևելքից, բայց առանց շոշափելի հաջողության։ Մի արձանագրության մեջ Աշշուրնասիրպալ II-ը (884—859)

---

[1] АВИИУ, № 23, I, 69 (ВДИ, 1951, № 2, էջ 286)։

[2] АВИИУ, № 23, II, 2 (ВДИ, 1951, № 2, էջ 287)։

[3] АВИИУ, № 24, ծան. 4 (ВДИ, 1951, № 2, էջ 290)։ Հիշատակվում են մի քանի «Ներրու», այսինքն լեռնանցքներ, որոնք Հայկական Տավրոսի լեռների վրայով տանում էին դեպի Հայկական լեռնաշխարհի ներքին շրջանները։

[4] *И. М. Дьяконов*, Заметки по урартской эпиграфике, „Эпиграфика Востока" (այսուհետև՝ ЭВ), IV, 1951, էջ 107—108։ *Г. А. Меликишвили*, Наири—Урарту, էջ 51—52, 248։

հաղորդում է, որ ինքը դրավել է «Սուբնաթ գետի ակունքներից մինչև Ուրարտու երկիրն ընկած հողերը, Կիրրուրի լեռնանցքից մինչև Գիլզանու երկիրը»[1]։ Մի այլ արձանագրության մեջ ասում է ավելի պարզ. որ ինքը նվաճել է «Սուբնաթ գետի ակունքից մինչև Ներիին Նիրբու, Կիրրուրի լեռնանցքից մինչև Գիլզանու երկիրը»[2]։ Վերջապես, երրորդ արձանագրության մեջ կարդում ենք, որ նա արշավանքներ է կատարել «Կիրրուրի լեռնանցքից մինչև Գիլզանու, Սուբնաթ գետի ակունքից մինչև Շուբրե երկիրը»[3]։ Ինչպես տեսնում ենք, երրորդ կոնտեքստում «Ներիին Նիրբուի» փոխարեն դրված է «Շուբրե երկիրը», որը վկայում է նրանց նույնության մասին։ Բայց արձանագրությունը կարող էր հաղորդել և այն մասին, որ նրանք հասել են մինչև Ուրարտու, քանի որ Սուբնաթ գետի (ներկայիս Ջերենե-սու) ակունքները գտնվում են Հայկական Տավրոսի հարավային ճյուղավորություններում, իսկ նրա հյուսիսային ճյուղավորություններում գտնվում էր Ուրարտու պետությունը։

Միևնույն ժամանակ, այդ գետի ակունքների շրջանից դեպի արևելք գտնվում էր բարձր լեռնային Շուպրիան։ Դարձվածքի երկրորդ մասը ևս բերված կոնտեքստներում հասկանալի է դառնում։ Ասորեստանցիները ջանում էին Շուպրիայի լեռնային մասն առնել աքցանի մեջ, այդ պատճառով փորձեր էին անում մոտենալ նրան ոչ միայն արևմուտքից, այլև արևելքից։

Կիրրուրի լեռնանցքը գտնվում էր Ասորեստանյան տերության հյուսիսային սահմանի վրա, Արևելյան Խաբուր գետի ակունքներից դեպի արևելք, որտեղից սկսվում էին խուրրիներով և ուրարտացիներով բնակեցված բարձր լեռնային շրջանները։ «Գիլզանու երկիրը» գտնվում էր Բիթլիս-սու գետի վերին հոսանքներում, որի ակունքների մոտ գտնվում էին «Ձորայ պահակը» (Բիթլիսի լեռնանցքը) և Ուրարտու պետությունը, իսկ Գիլզանուից արևմուտք գտնվում էր Շուպրիայի լեռնային մասը։

Ասորեստանցիները հաջողություն են ունենում Շուպրիայի միայն հարավային և արևմտյան մատույցներում և կարողանում են տիրանալ նրա երկու շրջաններին Կուլլիմերի և Ուպպումու քաղաքներով, որոնք հետագայում դառնում են նորաստեղծ փոխարքայությունների կենտրոնները։

Kullimeri քաղաքը հայտնի էր հայերին և իրանցիներին նաև միջին դարերում՝ Կուտեմռան կամ Քղմար («Կուտեմռան, որ է Քըղմար»)[4] անունով (բյուզանդական աղբյուրների Χλομαρων)[5], որ գտնվում էր Քաղիրթ գետի ձախ ափին (ասորեստանյան արձանագրություններում անվանվում է Կալլա[մ]ա[6], ներկայիս Բաթման-սու)։ Հնարավոր է, որ Կուտեմռան ձևը ծագում է Ku[t]ta անունից[7]։

Երկրորդ վայրը՝ Ուպպումու (կամ Պումու) քաղաքը համապատասխանում է ներկայիս Ֆումին, Բաթման-սուի վտակներից մեկի վրա, ըստ բյուզանդական աղբյուրների Αφουμων[8]։

---

[1] АВИИУ, № 24 (ВДИ, 1951, № 2, էջ 290)։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում, № 25, էջ 291։
[4] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ, Վենետիկ, 1881, էջ 37։
[5] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПБ, 1908, էջ 9։
[6] АВИИУ, ВДИ, 1951, № 2, էջ 313, ծան. 12։
[7] Նույն տեղում։
[8] Н. Адонц, նույն տեղում։

Կուլլիմերիից արևելք, Տիգրիսի վտակ Խարկան-սուի հովտում գտնվում էր «Ուլլուբա երկիրը»։

Այս երկու վայրերի տեղադրումն է, որ հիմք է տալիս նույնացնելու ասորեստանյան աղբյուրների Շուպրիա երկիրը Urme(ie), Urmeuhi կամ Arme երկրի հետ։

Մենուայի արձանագրության մեջ (Մուշից) հաղորդվում է. «Ելա (արշավանքի) ...Կուլմերի (քաղաքը)....Ատաունե քաղաքը։ Ես ելա (արշավանքի) Ուրմե երկրի դեմ, ես նվաճեցի Ուրմե երկիրը, ես կանգնեցրի այս արձանագրությունը»[1]։

Մուշ քաղաքից ոչ հեռու Դրմերտ գյուղում գտնվել են երեք բեկոր, որոնցից առաջինում կարդում ենք. «...Ալաու[...] երկիրը... Ուրմեուխի երկրի դեմ... Ալաու[...] երկիրը ես ետ մղեցի նրանց... ես սպանեցի... Ուրշա[...]նի քաղաքը... ես նվաճեցի երկիրը... Ուրմեուխի երկրի դեմ... ես խլեցի...»։ Երկրորդ բեկորում կարդացվում է. «...400 քաղաք ես ոչնչացրի ...Ես այրեցի... բերդեր... Կուլմերի քաղաքը... ես բերդ կառուցեցի... ես ստրկացրի... ես իր տեղը ցույց տվեցի... երկիրը... ես խնայեցի...»[2]։

Այս հատվածային տեքստերից երևում է, որ դեռևս Մենուան (810—785) արշավանք է կատարել դեպի Շուպրիա, որը նա անվանում է Ուրմեուխի կամ Ուրմե։ Նա նվաճում է այս երկիրը Qulmeri (այսինքն Կուլլիմերի) քաղաքի հետ միասին։ Բայց, ինչպես երևում է, ուրարտացիները չեն կարողանում այն ամուր պահել իրենց ձեռքում և որպես իշխողներ թողնում են տեղական «թագավորներին»՝ ցեղային առաջնորդներին։ Միայն Արգիշտի I-ը կարողացավ նվաճել այն և միացնել Ուրարտական պետությանը։ Այս թագավորի տարեգրության մեջ, գահակալության 14-րդ տարուն (այսինքն ն.մ.թ. 773 թ.) վերաբերող կետում կարդում ենք. «Ես ելա (արշավանքի) Ուրմե երկրի վրա, ես նվաճեցի Ուրմե երկիրը, ես ավերեցի երկիրը։ Ես հասա (?) մինչև... երկիրը, քաղաքները այրեցի, տղամարդկանց (և) կանանց ես տարա Բիահինիլի երկիրը. ընդամենը 24 (?) հազար 813 մարդ մեկ տարում, ոմանց ես սպանեցի, մյուսներին տարա կենդանի (տարա նույնպես) 25 ձի... 744 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 48825 գլուխ մանր եղջերավոր անասուն»[4]։ Բայց, ինչպես երևում է, այս երկիրն անընդհատ ապստամբում էր։ Սարդուրի II-ի (764—735) արձանագրության (Վանի Սուրբ Պողոս եկեղեցուց) տեքստից իմանում ենք, որ ն. մ. թ. 753 կամ 752 թթ. «Խալդի աստվածը (արշավանքի) եկավ իր զեն-

---

[1] *Г. А. Меликишвили*, Урартские клинописные надписи (այսուհետև՝ УКН), № 40 (ВДИ, 1953, № 2, էջ 266)։

[2] *Г. А. Меликишвили*, Наири—Урарту, էջ 275։ Ուրմե ‖ Ուրմեուխի երկիրը Ն. Գ. Ադոնցը տեղադրում է այն վայրում, որտեղ գտնվել են այդ երկրի մասին տեղեկություններ հաղորդող արձանագրությունները, այն է՝ Մուշ քաղաքի և Դրմերտ գյուղի շրջանում (*Nicolas Adontz*, Histoire d'Armenie, Paris, 1946, էջ 199)։ Այս կարծիքի հետ, սակայն, չեն համընկնում մեր քննած տվյալներն այդ երկրի տեղադրման մասին։ Ըստ Դյակոնովի իրավացի դիտողության, «նման արձանագրությունները հաճախ կանգնեցվել են հարևան, ավելի ամուր նվաճված տերիտորի։ներում, որտեղ, մասնավորապես, արձանագրություններն էլ ավելի անվտանգ էին» (*И. М. Дьяконов*, Рецензия на исследование Г. А. Меликишвили, Урарту, ВДИ, 1956, № 2, էջ 60)։

[3] УКН, № 127, VI (ВДИ, 1953, № 3, էջ 251)։

[4] Նույն տեղում։

քով(?)... հաղթեց Արմե երկիրը, հաղթեց Նիխիրիանի քաղաքը, երկրի թագավորական քաղաքը, հպատակեցրեց նրանց Սարդուրիին, Արգիշտիի որդուն»[1]։

Սարդուրի II-ի տարեգրություններում, այդ թագավորի ն. մ. թ. 751 կամ 750 թթ. արշավանքների մասին կարդում ենք. «Նույն թվին երրորդ անգամ (?) ես ելա (արշավանքի) Արմե երկրի վրա. 11 բերդ ես նվաճեցի (և) ավերեցի, տղամարդկանց (և) կանանց այնտեղից ես քշեցի։ 1100 պատանի ես տարա (ինչպես նաև) 6500 կին, 2000 ձիավոր, 2538 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 8000 գլուխ մանր եղջերավոր անասուն»[2]։

Մեր ուրարտագետներ Գ. Ա. Ղափանցյանն[3] ու Բ. Բ. Պիոտրովսկին[4] են, որ առաջին անգամ ուշադրություն են դարձրել Արմե երկրի անվան և armen էթնիկական տերմինի միջև եղած կապի վրա։ Նրանք եկել են այն եզրակացության, որ armenii (հուն. ἀρμένιοι, հին պարսկ. arminiya) անունը հանդիսանում է երկրորդական գոյացում III ուրարտական վերջածանցով (*armini—«արմեացի»), որ ծագել է խուրրի-ուրարտական լեզվահիմքի վրա, հայերի նախնիների Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանը գաղթելուց հետո։ Սրա հետ համաձայնվում են նաև ակադ. Հ. Հ. Մանանդյանը[5] և Ի. Մ. Դյակոնովը[6]։

Արմե երկրի հետ է կապվում ուրարտական Սարդուրի II (764—735) թագավորի արձանագրության (Վանի Սուրբ Պողոս եկեղեցուց) մեջ հիշատակված Նիխիրիանի քաղաքի տեղադրությունը։ Այս արձանագրության մեջ Սարդուրի II-ը, Սևանի ավազանի լճամերձ «երկրները» նվաճելու մասին հիշատակությունից հետո հաղորդում է, որ «նա հաղթել է Աշշուրնիրարիին, Ագագնիրարիի որդուն, Ասորեստանի թագավորին։ Հաղթել է Արմե երկիրը, հաղթել է Նիխիրիանի քաղաքը, երկրի արքունական քաղաքը, հպատակեցրել նրանց Սարդուրիին, Արգիշտիի որդուն»[7]։ Ինչպես Գ. Ա. Ղափանցյանը, այնպես էլ Բ. Բ. Պիոտրովսկին գտնում են, որ այս կոնտեքստում «երկրի արքունական քաղաք» Նիխիրիանին՝ Արմե երկրի մայրաքաղաքն է, ըստ որում, առաջինը տեղադրում էր այն Արդանա-սուի վրա, հին հայկական Անգեղ բնակավայրի տեղում[8], իսկ երկրորդը՝ հայկական Նփրկերտ-Միափարկին (հին Տիգրանակերտ) քաղաքի տեղում[9]։

Ինչպես կտեսնենք ստորև, նրանք երկուսն էլ իրավացի չեն։ Սխալվում է նաև Հ. Հ. Մանանդյանը, երբ Արմեն համարում է արամեացիների երկիր, բայց նա իրավացի է, երբ Նիխիրիանի քաղաքը փնտրում է Արևմտյան Տիգրիսից հարավ, Քաշշիարի լեռներում[10]։

---

[1] УКН, № 156, Д I+Д II (ВДИ, 1953, № 4, էջ 197)։

[2] УКН, № 155, А (ВДИ, 1953, № 4, էջ 180)։

[3] *Гр. Капанцян*, Хайаса — колыбель армян, Ереван, 1947, էջ 191, 198 և հտ.։

[4] *Б. Б. Пиотровский*, О происхождении армянского народа, Ереван, 1946, էջ 9, 20, 27։

[5] *Я. А. Манандян*, О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, էջ 152, 153։

[6] *И. М. Дьяконов*, Заметки по урартской эпиграфике, I, ЭВ, 1951, էջ 108, Նույնի՝ «Խեթերը, փոյուզիացիները և հայերը», Հայկական ՍՍՌ ԳԱ Տեղեկագիր, (հաս. գիտ.), 1956, № 11, էջ 39։

[7] УКН, № 156, ВДИ, 1953, № 4, էջ 197։

[8] *Гр. Капанцян*, Хайаса — колыбель армян, էջ 199։

[9] *Б. Б. Пиотровский*, О происхождении армянского народа, էջ 9, 20, 27։

[10] *Я. А. Манандян*, Նշվ. աշխ., էջ 138, 141։

Նիխիրիանի քաղաքի տեղադրության հարցում ակադ. Հ. Հ. Մանանդյանը ճիշտ կարծիքի է։ Մի շարք տվյալներ ցույց են տալիս, որ «Սարգուրի II-ի արձանագրության Նիխիրիան, որ նույնն է, ինչ խեթական և ասորեստանյան արձանագրությունների Նիխրիան, իսկապես գտնվել է Քաշշիարի լեռնային շրջանում»[1]։ Դա հաստատվում է Աշշուրում եղած ասորեստանյան փոխարքա-էպոնիմների քարակոթողների վրայի արձանագրություններից մեկի վկայությամբ։ Աշշուրյան 66-րդ քարակոթողում կարդում ենք. «Աշշուրշեզիբանիի, տուրտանի, Նինվե քաղաքի շրջանի փոխարքայի, Կուտմուխի շրջանի փոխարքայի, Նիխրիա շրջանի փոխարքայի, Ադադկիշտիետիրի [?] [որդու] քարակոթող»[2]։

Այս վկայությունը ցույց է տալիս, որ Նիխրիա շրջանը գտնվել է Նինվե և Կուտմուխի շրջանների մոտ, որոնց տեղադրությունը մեզ լավ հայտնի է։ Նինվեի շրջանը համապատասխանում է ներկայիս Մոսուլի տերիտորիային, իսկ Կուտմուխին գտնվել է ավելի արևմուտք, Տուր-Աբդին-Քաշշիարի լեռներում, Ջեզիրե և Միդիադ քաղաքների շրջանում։

Նիխիրիա շրջանի տեղադրությունը որոշելու համար անհրաժեշտ է գիտենալ, որ ասորեստանյան թագավոր Թուկուլթի-Նինուրտա I-ի արձանագրություններում այն անվանվում է Նիխանի և հիշատակվում է «շուբարիացիների ընդարձակ երկրի» թվում։ Իր արձանագրություններում Թուկուլթի-Նինուրտա I-ը ունի հետևյալ տրաֆարետ դարձվածքը. «Այն ժամանակ Բաբխին, Կագմուխի, Փուշշի, Մումմի, Ալզի, Մադանի, Նիխանի, Ալայա, Տեղիմղի, Պուրուլումզի երկրները՝ շուբարիացիների ողջ ընդարձակ երկիրը, ես այրեցի կրակի մեջ»[3]։ Այս կոնտեքստից երևում է, որ Նիխիրիանի||Նիխիրիա||Նիխուրիա երկիրը կոչվել է նաև Նիխանի։ Եթե մեր ենթադրությունը ճիշտ է, ապա կարելի է ընդունել, որ Նիխանի երկիրը պետք է փնտրել Կագմուխի շրջանից արևելք, Տիգրիսի դալարի մոտ, նրա աջ ափին, այնտեղ, ուր Կովկասյան ռազմական շտաբի նախաուղղությունը տասը վերստանոց քարտեզի վրա նշանակված է Нихан-даг լեռնագագաթը։

Ասվածից պարզ է դառնում, թե ինչու Սարգուրի II-ի արձանագրության մեջ Նիխիրիանին ներկայանում է որպես «երկրի արքունական քաղաք»։ Ինչպես իրավացիորեն նկատում է Ի. Մ. Դյակոնովը, սրանից չի կարելի եզրակացնել, թե այս քաղաքը Արմե երկրի մայրաքաղաքն է եղել, ինչպես կարծում են Գ. Ա. Ղափանցյանը և Բ. Բ. Պիոտրովսկին։ «Երկրի արքունական (կամ թագավորական) քաղաք» դարձվածքը ցույց է տալիս միայն այն, որ Նիխիրիանի քաղաքում նստելիս է եղել փոխարքան՝ շրջանի կառավարիչը։ Այսպիսով, Նիխիրիանի քաղաքը ասորեստանյան Նիխրիա կամ Նիխանի նահանգի կենտրոնն է եղել, և այդ նահանգը մի ժամանակ միացված է եղել Նինվե և Կագմուխ նահանգներին։

Ներկայիս Նիխան-դաղի շրջանի այդ նույն տերիտորիան մի ժամանակ մտել է նաև Ուրուատրի երկրի կազմի մեջ։

Նիխիրիանի քաղաքի տեղադրումը Տիգրիսից հարավ ցույց է տալիս, որ ասորեստանյան և ուրարտական աղբյուրներում հիշատակվող Արմե||Ուրումե||Ուրմենիուխի երկիրը չի կարող կապ ունենալ այդ քաղաքի շրջանի հետ։ Դրանք

---

[1] Я. А. Маканд ян, նշվ. աշխ., էջ 140։

[2] АВИИУ, 40, ВДИ, 1951, № 2, էջ 310։

[3] АВИИУ, 3, 4, 6, 7, ВДИ, 1951, № 2, էջ 267, 268, 269։

ԱՐՄԵ-ՇՈՒՊՐԻԱ ԵՐԿԻՐԸ XII–VIII ԴԴ. ՄԹ.Ա.



միանգամայն տարբեր տերիտորիաներ են։ Այդ պատճառով մեզ թվում է, որ Սարդուրի II-ի արձանագրության վերոհիշյալ տեքստը պետք է այլ կերպ հասկանալ։ Արձանագրության համաձայն ուրարտական թագավոր Սարդուրի II-ը (764—735) հաղթել է ասորեստանյան Աշշուրնիրարի V (VI) թագավորին (753—746), հետո նվաճել է Արմե երկիրը, այնուհետև Նիխիրիանին, որը եղել է երկրի թագավորական, կամ ավելի ճիշտ՝ արքունական, քաղաքը։ Տվյալ կոնտեքստում Նիխիրիանին հիշատակվում է Արմե երկրի կողքին, որպես այլ տերիտորիան, ինչպես տեսանք, աստանձին նահանգի կենտրոն։

Ասորեստանյան արձանագրություններում մինչև ն. մ. թ. 911 թ. հիշատակվող Նիխիրիա քաղաքը և շրջանը ուրարտական աղբյուրների Նիխիրիային է[1]։

Ի մի բերելով քննարկած տեղեկությունները, հանդում ենք հետևյալ եզրակացություններին։ Այս տվյալները ցույց են տալիս, որ ն. մ. թ. XII հարյուրամյակի կեսերին, մուշկեր ընդհանուր անունը կրող ցեղերի թվում, Ասորեստանյան պետության սահմաններն է ներխուժել ուրումեացիների ցեղը, որը հաստատվել է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում։ Այնուհետև ուրումեացիներն աստիճանաբար գրավում են Շուպրիա շրջանի ողջ տերիտորիան, այսինքն, Արևմտյան Տիգրիսի ձախափնյա հողերը, ներկայիս Դիարբեքիրի և Բաթման-սու գետի միջև։ Ուրումեացիները նույն արիմները կամ արմենները են, այդ պատճառով էլ ասորեստանյան արձանագրություններում այս տերիտորիան ցույց տալու համար Շուպրիա resp. Շուբրե տերմինի հետ միաժամանակ երբեմն օգտագործվում են Ուրումու[2], Արիմե և նույնիսկ Արամ[3] անվանումները։

Սկսած IX դարից, Ուրարտուն ընդարձակվելով հասավ նաև Շուպրիա երկրին, բայց մինչ այդ երկիրն արդեն այնքան էր յուրացված նոր եկվորների՝ ուրումեացիների կամ արմենների կողմից, որ Շուպրիա անվան փոխարեն ուրարտական արձանագրություններում օգտագործվում են Ուրումե (var. Ուրմեուխի) և Արմե անունները։ Այսպիսով, տեղական խուրրիական բնակչությանը արմենները ձուլել էին իրենց, ինչից պարզ է դառնում, որ սխալ է այն կարծիքը, իբր արիմների ցեղը տեղական խուրրիական ցեղ է, որը ձուլվելով հայերին, տվել է նրանց իր անունը՝ արմեն։

Հանրագումարի բերելով վերոշարադրյալը, մենք գալիս ենք հետևյալ եզրակացության։

Շուպրիա երկրում, մասնավորապես Իշուվա, Ալզի և Պուրուլումդի շրջաններում, բնակություն են հաստատում հյուսիս-արևմուտքից ներխուժած մուշկերի, ուրումեացիների և կաշկեացիների ցեղերը, որոնք ն. մ. թ. XII դարի կե-

---

[1] АВИИУ. № 40 և ծանոթ. 6 (ВДИ, 1951, № 2, էջ 310—311)։

[2] Օրինակ, ինչպես վերը նշեցինք, «ներքին Ուրումու» կամ «ներքին Նիրրու», այսպես պետք է կոչվեր Շուպրիան նեղ իմաստով՝ ներկայիս Սասունի տերիտորիան։

[3] Թիգլաթպալասար I-ի (?) հաջորդ Աշշուրբելկալի (?) թագավորի «կոտրված կոթողի» արձանագրության մեջ կարդում ենք. «...նույն տարում ուլուլու ամսին Արամ երկրի վրա արշավանքի ժամանակ նա ընդհարվեց Շուբրե երկրի Մուրար [բիր] (?) բնակավայրում»։ Տեքստում հիշատակվող Արամբ (mat A-re-me, *Arumu-ի սեռական հոլովը), Ի. Մ. Դյակոնովը համարում է արամեացիների անունը. նա գտնում է, որ խոսքը Շուպրիա երկրի մասին է (ВДИ, 1951, № 2, էջ 281, ծանոթ. 14 և 15)։ Մենք գտնում ենք, որ Շուպրիան արամեացվել է զգալիորեն ուշ և որ տվյալ դեպքում Արամ անվան տակ պետք է հասկանալ Արիմե կամ Արամե երկիրը։

սերին կազմում են ցեղային միություն, որը ասորեստանյան արձանագրություններում հայտնի է որպես «Մուշկերի թագավորություն»։ Սկզբում այդ միությունը գլխավորում էին հինգ թագավորներ։ Շուտով «Մուշկերի թագավորության» հետ միավորվում են նաև Արևմտյան Տիգրիսի ավազանի բնիկ խուրրիական ցեղերը՝ Շուպրիա, Կազմուխի, «Բաբխի», «Խասբխի» և այլ երկրները։ Այս ցեղային միությունը հաջող պատերազմներ է մղում ասորեստանյան նվաճողների, հետագայում նաև Ուրարտու պետության դեմ։ Ժամանակի ընթացքում Իշուվա, Ալզի և Պուրուլումզի շրջանների տերիտորիայում «Մուշկերի թագավորության» փոխարեն հանդես է գալիս Արմե երկիրը, որը կոչվում է նաև Ուրումե, Ուրմեենիուխի։ Այս անունը աստիճանաբար տարածվում է ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող ողջ Շուպրիա երկրի վրա։

Ցեղային միությունը, որն սկզբում կոչվում էր «Մուշկերի թագավորություն», իսկ հետագայում՝ Արմե կամ Շուպրիա, կայուն միություն դուրս եկավ, մի բան, որ պայմանավորված էր Ասորեստանի և Ուրարտուի ռազմական ագրեսիայի դեմ պայքարի անհրաժեշտությամբ։ Անդրադառնալով ամերիկյան իրոկեզների ցեղին, որոնք գտնվում էին համանման պայմաններում և գրավել էին նոր տերիտորիա, Ֆ. Էնգելսը գրում է. «Քանի որ այդ մարդը նրանք նոր էին նվաճել, ուստի այդ ցեղերի ըստ սովորության միմյանց հետ միացած լինելը նրանց կողմից դուրս քշված ցեղերի հանդեպ՝ միանգամայն բնական էր»։ Այդ ցեղային ֆեդերացիան «իր ձեռք բերած ուժի գիտակցության վրա հենված անմիջապես հարձակողական բնույթ ստացավ և... իրեն շրջապատող ահագին երկրամասեր նվաճեց, ըստ որում, բնակիչներին մասամբ դուրս մղեց իրենց բնակավայրերից, մասամբ իրեն հարկատու դարձրեց»[1]։

Ինչպես տեսնում ենք, որպես օրինակ Ֆ. Էնգելսը բերում է Արմե-Շուպրիա ցեղային միության կազմավորման պայմաններին համանման մի դեպք։

Նման ցեղային միությունների ծագման պատճառների մասին Ֆ. Էնգելսը գրում է. «Ազգակից ցեղերի մեջ տեղ-տեղ դաշինքներ կնքվում էին ժամանակավոր կարիքի դեպքում և իսկույն էլ, այդ կարիքը վերացվելուց հետո, ցրվում էին։ Սակայն որոշ վայրերում սկզբնապես ազգակից, բայց իրարից բաժան-բաժան եղած ցեղերը կրկին միանում և տևական դաշինք էին կնքում, դրանով առաջին քայլն անելով դեպի ազգությունների կազմությունը»[2]։

Այս պատմական անալոգիան հնարավորություն է տալիս բացահայտելու մեզ հետաքրքրող Արմե-Շուպրիա ցեղային միության զարգացման ներքին պայմանները։ Մեզ հասած փաստերը ցույց են տալիս, որ այս միությունը կազմած ցեղերը Ն.մ.թ XII—XI դարերում իրենց զարգացման մակարդակով իրոկեզներից բարձր էին կանգնած։ Իրոկեզների միությունը արյունակից ցեղերի միություն էր և ուներ ընդհանուր լեզու, իսկ Արմե-Շուպրիա միության մեջ մտնում էին իրենց ծագումով տարասեռ ցեղեր։ Դրանք էին՝ «մուշկերը»— այս անվան տակ այդ շրջանում հասկացվում էին փռյուգիական ցեղերը (միսիացիները և մյուսները), և ուրիշ ազգակից ու դաշնակից էթնիկական գոյացումներ, ինչպիսիք էին ասորեստանյան այլ արձանագրություններում հիշատակվող «ուրումեացիները», հայերի հնդեվրոպական նախնիները՝ արիմները.

---

[1] Ֆ. Էնգելս. Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը, Երևան, 195՝, էջ 131 -132։

[2] Նույն տեղում, էջ 131։

ինչպես նաև կասկեացիները կամ աբեշլացիները, որոնք պատկանում էին նախախեթական արխազա-չերքեզական ցեղերին։ Հիշատակված մուշկերը, ուրումեացիները և կասկեացիները տեղում հանդիպեցին զանազան խուրրիական ցեղերի, որոնք կամ դարձան նրանց դաշնակիցներն ընդդեմ ընդհանուր թշնամու՝ Ասորեստանի, կամ ենթարկվեցին նրանց, դառնալով նրանց հարկատուները։ Այսպիսով, «Մուշկերի բազավորություն» կամ Արմե-Շուպրիա ցեղային միությունը ոչ թե արյունակից, այլ ծագումով և լեզվով տարբեր ցեղերի միություն էր, զա տերիտորիալ միություն էր։ Սակայն դատելով անուղղակի տվյալներից, ժամանակի ընթացքում այդ ցեղային միության հաղորդակցման լեզուն դառնում է հայերենը։

Վերը մենք տեսանք, որ այս միությունը կազմող ցեղերը՝ մուշկերը, արիմները (ուրումեացիները) և կասկեացիները (աբեշլացիները) դառնում են նրստակյաց հողագործներ, իսկ նրանց և տեղական խուրրիական ցեղերի զբաղեցրած տերիտորիան նվաճում է Ասորեստանը և այդ ցեղերին դարձնում իր հարկատուները։

Այս ցեղերի՝ ասորեստանցիների կողմից նվաճված տերիտորիան հնուց ի վեր հայտնի է եղել նրանց Շուպրիա կամ Շուբրիա ընդհանուր անունով։ Այնուհետև ասորեստանցիներն սկսում են այն կոչել նաև Ուրումու։ Հետագայում, ն. մ. թ. VIII դ. սկսած, երբ այդ տերիտորիան նվաճվում է և մտցվում Ուրարտու պետության կազմի մեջ, ուրարտական սրձանագրություններում այն սկսում է կոչվել Արմե, Ուրմե կամ Ուրմենիուխի։ Այս փաստը, ըստ երևույթին, ցույց է տալիս, որ հիշատակված ցեղերի մեջ, վերջին հաշվով, գերիշխող դիրք են գրավում արիմները կամ ուրումեացիները, որոնց անունով էլ սկսում է կոչվել Շուպրիան ուրարտացիների, մասամբ նաև ասորեստանցիների մոտ։ Այստեղ մուշկերը ձուլվում են իրենց ազգակից արիմների մեջ, մինչդեռ Հալիս գետի հովտում, ուր ապրում էր մուշկերի հիմնական մասը, նրանք պահպանել էին գերիշխող դիրքը։ Նրանց զբաղեցրած տերիտորիան ուրարտացիներն ու ասորեստանցիներն անվանում էին Մուշկու կամ Մուշկինի։

Մեզ հետաքրքրող հարցի համար ընորոշ է այն փաստը, որ նոր վայրում՝ Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում, ոչ թե արիմները ձուլվեցին մուշկերին, այլ, ընդհակառակը, մուշկերը ձուլվեցին արիմներին[1]։ Այն հարցը, թե ինչպես կարող էր հայոց լեզուն դառնալ ողջ ցեղային միության հաղորդակցման լեզուն, մենք կարող ենք պարզել դարձյալ դիմելով պատմական անալոգիաներին։ Իր զարգացման աստիճանով Արմե-Շուպրիային համանման պայմաններում էր գտնվում ացտեկների միությունը, որը կրում էր նախ՝ պաշտպանողական, ապա հարձակողական բնույթ[2]։ Ացտեկների միության մեջ մտնում էին նաև լեզվով ոչ ազգակից ցեղեր։ Սակայն նրանք չէին կարող դառնալ միության օրգանական անդամներ, քանի դեռ նրանց անջատում էր լեզվի տարբերությունը, որը խանգարում էր այդ ցեղերին մասնակցելու ընդհանուր

---

[1] Սա չէր խանգարում այն բանին, որ հյուսիսային հարևանների՝ ժամանակակից վրացիների նախնիների մոտ արիմ-արմենները նախկինի նման կոչվեն «մուշկեր» (—մեսխ, մեխ, սոմեխ)։

[2] Տե՛ս ակադ. Վ. Վ. Ստրուվեի հոդվածը Дж. Вайян, „История ацтеков" գրքում, Москва, 1949. էջ 9։

խորհուրդներին, ծեսերին և այլն[1]։ Այդ արգելքը կարելի էր հաղթահարել ցեղային լեզուներից որևէ մեկը միջցեղային լեզու դարձնելով[2]։ Այս հանգամանքը որոշիչ գործոն է հանդիսանում ցեղերի, որպես ժողովուրդ, համախմբման մեջ, ինչի վրա ուշադրություն է դարձրել Ֆ. Էնգելսը։ Նա գտնում է, որ ցեղերի տեսական միությունները առաջին քայլն են նրա տերմինաբանությամբ «ազգի», այսինքն, ժողովրդի կազմավորման գործում[3]։

Այսպիսով, պատմական անալոգիաները ցույց են տալիս, որ տերիտորիալ տեսակետից մոտ, բայց ծագումով և լեզվով տարբեր ցեղերի միության պայմաններում տարալեզվության նման արգելքը վերացնելու համար որպես միջցեղային լեզու մտցվում է միության մեջ մտած ցեղերից մեկի լեզուն։ Ինչպես երևում է, մուշկերի ցեղային միության՝ «Մուշկերի թագավորության» մեջ միջցեղային հաղորդակցման այդպիսի միջոց է դառնում արիմների-ուրումեացիների լեզուն, այսինքն հայերենը։ Մուշկերը, որոնց լեզուն հայերենին ազգակից միսիերենը կամ փրյուգերենն էր, բնականաբար, արագ ձուլվեցին հայերին, և հետագայում, «Մուշկերի թագավորության» փոխարեն արդեն հանդես է գալիս Արմե կամ Ուրումե երկիրը։ Այսպիսով, հայերենը ժամանակի ընթացքում դառնում է ցեղային միության միակ լեզուն։ Մյուս, գերազանցապես խուրրիական ցեղերի լեզուներն աստիճանաբար վեր են ածվում հայոց լեզվի տերիտորիալ բարբառների, իսկ հայոց լեզուն ավելի ու ավելի հզորանալով, տարածվում է Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններում ապրող ցեղերի մեջ։ Սրան զգալիորեն նպաստում էր Ուրարտու պետության կենտրոնական շրջաններում նվաճված երկրների բնակչության մասսայական վերաբնակեցման սիստեմը, որ լայնորեն կիրառվում էր ուրարտացիների կողմից։

Վերը քննարկված տվյալները ցույց են տալիս, որ Խայասա-Խաթեից հետո Արմե երկիրը այդ շրջանում դեռևս գերազանցապես վայելում էր հայկական ցեղերի երկրորդ հզոր ցեղային միավորումն էր։ Արմե ցեղային միությունը նվաճվեց և միացվեց Ուրարտական պետությանը Ն. մ. թ. մոտավորապես 773 թ.։ Այդ ժամանակից Արմե-Շուպրիան իրենից ներկայացնում էր ուրարտական փոխարքայություն։ Ն. մ. թ. 714 թ. Սարգոն II-ի արշավանքներից հետո, երբ անջատվեցին Հայկական Տավրոսի հարավային ճյուղավորություններում գտնվող ուրարտական տիրույթները, Արմե-Շուպրիան դառնում է ինքնուրույն իշխանություն, հավասարապես թշնամի թե՛ Ասորեստանին, թե՛ Ուրարտուին։ Արմե-Շուպրիան Խուրուշկիայի, Մուսասիրի և Հայկական Տավրոսի հարավային ճյուղավորություններում եղած մյուս պետական միավորումների հետ միասին պայքարում էր Ասորեստանի և Ուրարտուի դեմ իր ինքնուրույնության համար։ Այս շրջանում Արմե-Շուպրիան այն ազատ երկիրն էր, որտեղ ապաստան էին գտնում Ասորեստանի և Ուրարտուի ստրկատիրական շահագործումից ղժգոհ բոլոր կախյալ մարդիկ[4]։

---

[1] *Л. Г. Морган*, Древнее общество, էջ 111—112։

[2] Տե՛ս *И. М. Дьяконов*, История Мидии, М.—Л., 1956, էջ 152—154։

[3] Ֆ. Էնգելս, Նշվ. աշխ., էջ 131։

[4] *Г. А. Меликишвили*, Наири—Урарту, էջ 352—353։ Այդ փախստականների թվում էին ասորեստանյան Սինաքերիբ (Սեններերիմ) թագավորին (705—681) սպանողները, որոնք ապաստան էին գտել Շուպրիայում Ն. մ. թ. 681 թ.։ Նույն տերիտորիայում, այսինքն ներկայիս Սասունում ապրող հայերի մեջ այդ մասին ավանդություններ էին պահպանվել մինչև առաջին համաշխարհային պատերազմը «Սասնա ծռեր» վեպի պատումներում։

Հենց այս վերջին հանգամանքն էր հիմնական պատճառը, որ երկու պետություններն ընդհանուր լեզու գտան այդ ցեղային միավորման ջախջախման գործում։ 673 թ. Ասորեստանի թագավոր Ասարհադդոնը (680—669) արշավեց Արմե-Շուպրիայի վրա, ջախջախեց նրան և միացրեց Ասորեստանյան տերությանը[1]։ Աշշուրբանապալի (668—633) կառավարման միջին շրջանում, այսինքն մոտավորապես 653 թ. ն. մ. թ., Ասորեստանը կորցնում է այս կարևոր շրջանը[2]։ Դա արդեն այն ժամանակն էր, երբ հայերը տարածվել էին Ուրարտու պետության կենտրոնական շրջաններում, շուտով դառնալով Հայկական լեռնաշխարհի առաջատար էթնիկական խումբը։

Ասորեստանյան և ուրարտական աղբյուրներից բերված տեղեկությունները ցույց են տալիս, որ հայերի (արմենների) և նրանց երկրի անունը (Արմենիա) օտարերկրացիների մոտ ծագել է այս շրջանում՝ նրանց կողմից խուրրիական Շուպրիայի յուրացման պրոցեսում։ Ինչպես Ուրմե կամ Ուրմեուխի, Ուրմեունի, այնպես էլ Արմե (Արմե[նի]) անունները պետք է համարվեն Armina, Armenia անվան նախատիպերը։ Այդ պատճառով մենք համաձայն չենք Գ. Ա. Ղափանցյանի այն կարծիքին, թե սուրիմ սկզբում կոչվել է տեղական խուրրիական ցեղը, որը ն. մ. թ. VIII—VII դդ. ձուլման է ենթարկվել այդ երկիրը գրաված, Խայասա երկրից գաղթած հնդեվրոպական եկվորների կողմից, որոնք իրենց անվանում էին խայասներ։ Այս կարծիքը լիովին բաժանում է Դ. Ա. Մելիքիշվիլին։ Նա գտնում է, որ «այս շրջանում (նկատի է առնվում Արմե-Շուպրիան—Ս. Ե.) հայկական ցեղերի կողմից գերիշխանություն ձեռք բերելը տեղի է ունենում հենց հին արևելյան պետությունների հզորության խորտակման էպոխայում։ Այդ էպոխայում (այսինքն ն.մ.թ. VII դ.—Ս. Ե.) հայկական ցեղերի խոշորագույն միավորման կենտրոն է դառնում, հավանաբար, հենց այս շրջանը։ Սրա հետևանքով այս շրջանի հին խուրրիական «Արմենի» անունը հարևան բնակչության կողմից տարածվում է հայկական ցեղերի վրա և հետագայում դառնում հայերի ամենատարածված անունը օտարերկրացիների մոտ»[3]։

Ի. Մ. Դյակոնովը միանգամայն հիմնավորված վիճարկում է Գ. Ա. Մելիքիշվիլու կողմից Հայկական լեռնաշխարհում հայկական ցեղերի հայտնվելու թվագրումը Ուրարտուի անկումից հետո, այսինքն ն.մ.թ. VI դարում[4]։ Փաստերը ցույց են տալիս, որ արդեն XII դ. ն. մ. թ., հայկական ցեղերը հայտնվում են Շուպրիայում, իսկ «ուրումե» կամ «արմեն» տերմինը զեկավար ցեղերից մեկի անունն էր, որ գաղթել էր Խայասա-Խաթե երկրից։ Հենց այս եկվորներն էլ Շուպրիային տվել են իրենց «Արմե» անունը, որը հետագայում էվոլյուցիա է տարել դեպի «Արմե[նի]» և «Արմինա» ձևը։ Ուրարտու պետության անկումը հենց նշանակալից չափով արդյունք էր այն բանի, որ Ուրարտական պետության համարյա ողջ տերիտորիայում ժամանակի ընթացքում իշխող էթնիկական տարր են դառնում որպես ժողովուրդ ձևավորող հայկական ցեղերը։

---

[1] АВИИУ, № 67, ВДИ, 1951, № 3, էջ 220։ *И. М. Дьяконов*, Заметки по урартской эпиграфике, ЭВ, IV, էջ 108։ *Г. А. Меликишвили*, նույն տեղում, էջ 314։

[2] *И. М. Дьяконов*, նշվ. աշխ.։

[3] *Г. А. Меликишвили*, Наири—Урарту, էջ 419։

[4] Տե՛ս *И. М. Дьяконов*, Рецензии на работы Г. А. Меликишвили, ВДИ, 1954, № 3, էջ 94 և 1956, № 2, էջ 67։

ПЛЕМЕННОЕ ОБЪЕДИНЕНИЕ АРМЯН В СТРАНЕ АРМЕ-ШУПРИА

С. Т. ЕРЕМЯН

(Р е з ю м е)

Древнейшее племенное объединение армянских племен, после Ерзинкайской долины (здесь находился центр страны Хайаса), прослеживается в нынеш. Харбердской долине и в прилегающих к ней областях. Здесь находились области Ишува, Алзи и Пурулумзи, в которых расселились вторгшиеся с северо-запада племена мушков, урумейцев и каскейцев. Эти племена в середине XII столетия до н. э. образовали союз племен, известный в ассирийских надписях как **«Царство мушков»**. Первоначально этот союз возглавляли пять «царей». Вскоре с этим «Царством мушков» объединились также местные хурритские племена в бассейне Западного Тигра.

На новом месте упомянутые мушки (фригийские племена — мисийцы и др.), урумейцы и каскейцы встретили различные хурритские племена, которые сделались либо их союзниками против общего врага Ассирии, либо подчинились им, сделавшись их данниками. Таким образом, племенной союз «Царство мушков» или Арме-Шуприа был союзом не кровнородственных племен, а союзом различных по своему происхождению и языку племен, это был с о ю з т е р р и т о р и а л ь н ы й. Однако, судя по косвенным данным, со временем языком общения племенного объединения становится армянский.

С течением времени эти племена сделались оседлыми земледельцами, а занятая ими и местными хурритскими племенами территория была завоевана Ассирией и они стали ее данниками. Завоеванная ассирийцами территория этих племен издавна им была известна под общим названием Шуприа или Щубриа, но впредь ассирийцы начали называть также названием Уруму. Впоследствии, с VIII в. до н. э., когда эта территория была завоевана и включена в состав государства Урарту, в урартских надписях она стала называться А р м е. У р м е или У р м е н и у х и. Этот факт, по-видимому, служит указанием того, что среди упомянутых племен, в конечном счете, доминирующее место заняли аримы или урумейцы, по имени которых и стала называться Шуприа у урартов и отчасти у ассирийцев.

Как видно, в племенном союзе мушков — «Царстве мушков» межплеменным средством общения становится я з ы к а р и м о в - у р у м е й ц е в, т. е. а р м я н с к и й я з ы к. Мушки, носители родственного армянскому языку мисийского, или фригийского языка, естественно, быстро ассимилировались армянами и впоследствии, вместо «Царства мушков», уже фигурирует Арме или Уруме[1]. Так, армянский язык с течением времени становится единственным языком племенного союза, а языки дру-

[1] Это не мешало тому, что у северных соседей — предков современных грузин аримы — армении по-прежнему назывались „мушками" (месх, мех, сомехи).

гих племен (преимущественно хурритских) постепенно превращаются в территориальные диалекты армянского языка, который, все более обогащаясь, распространяется среди племен, живших во внутренних областях Армянского нагорья.

Приведенные данные ассирийских и урартских источников показывают, что название армян и их страны — Армении у иноземцев возникло в этот период в процессе освоения армянами хурритской Шуприи. Как Урме, или Урмеухи|| Урмеуни, так и Арме—Арме [ни] должны считаться прототипами названия Armina, Armenia. Так называли иранцы и греки образовавшееся во второй половине VII в. до н. э. первое армянское государственное образование, возникшее на территории захиревшего Урарту.